ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾԿՀ-25/3-ՄԱԾՁԲ

ք.Երևան «_____» _____ 2025 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժ և տուգանք:

Digitally signed by SAFARYAN ARTUR 2401750053
Date: 2025.02.06 12:33:01 AMT

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **600000 (վեց հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում միչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	«Մանվել Ջալավյան» ԱՁ
ք. Երևան, Սարյան 22	Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011183010	Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 02531594	ՀՎՀՀ 82934656
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան	Տնօրեն՝ Մ. Ջալավյան
_____	Digitally signed by JALAVYAN MANVEL 3102850170 Date: 2025.02.06 11:10:00 AMT _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը 2025թ
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ/համաձայն կից ներկայացված ցուցակի/: Սարքավորման տեղափոխումը վերանորոգման և ետ վերադարձը իրականացնում է սպասարկողը:	դրամ	600000	1	ք. Երևան, Սարյան 22	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 18-րդ ենթակետով սահմանված լիազորված մարմնի կողմից գործարքի հաշվառման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի

ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	**Ծառայության անվանումը**	**Գինը**
	ՍԵՐՎԵՐԻ	
1	Դիագնոստիկա	5902
2	Պրոֆիլակտիկա	5312
3	Օպերացիոն համակարգի կարգավորում	14756
4	Raid- վերականգնում	6198
5	Սնուցման բլոկի նորոգում կամ փոխարինում նորով	20954
6	Մայրական տպասալի նորոգում	9739
	ՀԱՄԱԿԱՐԳՉԻ	
7	Համակարգչի դիագնոստիկա	1328
8	Համակարգչի պրոֆիլակտիկա	2361
9	Օպերացիոն համակարգի տեղադրում	4870
10	Օպերացիոն համակարգի կարգավորում	2833
11	Վիռուսազերծում	1918
12	Բիոսի (Bios-ի) վերածրագրավորում	7083
13	Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ Քուլեր (Cooler)	8854
14	Մայրական տպասալի նորոգում	4870
15	Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը 945/G31/G41 Socket չիպսեթ, (Intel/Asus) համարժեքը	19478
16	Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը 1150/1151/1155/1156/1200 Socket չիպսեթ, (Intel/Asus) համարժեքը	37776

17	RAM փոխարինում ներառյալ DDR400 1024MB համարժեքը	974
18	RAM –ի փոխարինում ներառյալ DDR2 1GB 667/800 MHZ համարժեքը	1476
19	RAM-ի փոխարինում ներառյալ DDR2 2GB 667/800 MHZ համարժեքը	2213
20	RAM փոխարինում ներառյալ DDR3 2048Mb 1333/1600 MHZ համարժեքը	5784
21	RAM փոխարինում ներառյալ DDR3 4096Mb 1333/1600 MHZ համարժեքը	13635
22	RAM փոխարինում ներառյալ DDR4 4096Mb 3200 MHZ համարժեքը	17530
23	RAM փոխարինում ներառյալ DDR4 8192Mb 3200 MHZ համարժեքը	22134
24	SVGA փոխարինում ներառյալ 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(1Gb PCI Exp) 128 բիտ համարժեքը	33496
25	HDD փոխարինում ներառյալ HDD 1024 GB SATA/7200 համարժեքը	29217
26	DVD-RW փոխարինում ներառյալ DVD-RW համարժեքը	11510
27	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ (Power supply 450W) համարժեքը	7732
28	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ (Power supply 600W) համարժեքը	13221
29	Սնուցման բլոկի նորոգում	3689
30	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ ցանցային քարտ D-link 10/100 համարժեքը	3453
31	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ ցանցային քարտ D-link 10/100/1000 համարժեքը	6817
32	Պրոցեսորի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը 775 Socket	4545
33	Պրոցեսորի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը 1150/1151/1155/1156/1200 Socket մեծ հովացուցիչով Cooler Master/ Zalman համարժեք	11510
34	SSD փոխարինում ներառյալ 256 GB համարժեքը	20363
35	SSD փոխարինում ներառյալ 512 GB համարժեքը	31106
36	Կոշտ սկավառակի (HDD 250 Gb) վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	35415
37	Կոշտ սկավառակի (HDD 500 Gb) վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	39842
38	Կոշտ սկավառակի (HDD 1 Tb) վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	45744
39	SSD 128 Gb վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	30988
40	SSD 256 Gb վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	38366
41	SSD 512 Gb վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	41317
42	SSD 1 Tb վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	47220
	ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ	
43	Դիագնոստիկա	1328
44	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 5A	8559
45	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 7A	11067
46	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 12A	12690
47	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 17A/18A	28568
48	Վերաչափաբերում	6788
	ՄՈՆԻՏՈՐԻ	
49	Դիագնոստիկա	1180
50	Սնուցման բլոկի նորոգում կամ փոխարինում	6198
51	Լամպի փոխարինում 17” ներառյալ լամպը	2981
52	Լամպի փոխարինում 19” ներառյալ լամպը	6050
53	Լամպի փոխարինում 20’’ ներառյալ լամպը	7968
54	Լամպի փոխարինում 24’’ ներառյալ լամպը	11805
55	Մատրիցայի փոխարինում ներառյալ մատրիցան 17”/19”/20”/24”	19478
	ԴՅՈՒՐԱԿԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ	
56	Սնուցման բլոկի նորոգում	3896

57	Դիագնոստիկա	1948
58	Պրոֆիլակտիկա	4870
59	HDD փոխարինում ներառյալ HDD 250 GB SATA/7200 համարժեքը	14609
60	HDD փոխարինում ներառյալ HDD 500 GB SATA/7200 համարժեքը	19478
61	HDD փոխարինում ներառյալ HDD 1 TB SATA/7200 համարժեքը	22400
62	SSD փոխարինում ներառյալ 128 GB համարժեքը	12484
63	SSD փոխարինում ներառյալ 256 GB համարժեքը	21249
64	SSD փոխարինում ներառյալ 512 GB համարժեքը	27742
65	SSD փոխարինում ներառյալ 1 TB համարժեքը	34883
66	RAM փոխարինում ներառյալ DDR3 2048Mb 1333/1600 MHZ համարժեքը	2922
67	RAM փոխարինում ներառյալ DDR3 4096Mb 1333/1600 MHZ համարժեքը	11805
68	RAM փոխարինում ներառյալ DDR4 4GB 2666 MHZ համարժեքը	11628
69	RAM փոխարինում ներառյալ DDR4 8GB 2666 MHZ համարժեքը	19478
70	Օպերացիոն համակարգի տեղադրում	3837
71	Bios-ի վերածրագրավորում	7673
72	Մայրական տպասալի նորոգում վիդեո չիպսետի փոխարինում	22134
73	Մատրիցայի փոխարինում նորով 15.6” LED/15.6” LED Slim	39251
74	Toshiba /HP/Samsung/Lenovo/Dell դյուրակիր համակարգչի ստեղնաշարի փոխարինում նորով ներառյալ ստեղնաշարը	23610
75	Toshiba /HP/Samsung/Lenovo/Dell դյուրակիր համակարգչի մարտկոցի փոխարինում նորով ներառյալ մարտկոցը	31283
76	Կոշտ սկավառակի (HDD 250 Gb)-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	35415
77	Կոշտ սկավառակի (HDD 500 Gb)-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	38366
78	Կոշտ սկավառակի (HDD 1 Tb)-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	44268
79	SSD 128Gb-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	29512
80	SSD 256Gb-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	33939
81	SSD 512Gb-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	38366
82	SSD 1 Tb-ի վնասված կամ ջնջված ինֆորմացիայի վերականգնում	44268

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

Digitally signed by JALAVYAN MANVEL
3102850170
Date: 2025.02.06 11:09:15 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	0	115000	115000	300000	300000	300000	485000	485000	485000	600000	600000	600000	600000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

Digitally signed by JALAVYAN MANVEL 3102850170
Date: 2025.02.06 11:08:49 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն